MINISTÈRE
DE LA JUSTICE
Liberté
Égalité
Fraternité

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յիշեցում ազատության մեջ գտնվող հարցաքննվող անձի

Ընդհանուր ձև

Ներքոնշյալ տեղեկատվությունը Ձեզ պետք է տրվի Ձեզ հասկանալի լեզվով:

Դուք տեղեկացված եք, որ հարցաքննվում եք, որովհետև Ձեր դեմ առկա են մեկ կամ մի քանի հավանական պատճառներ կասկածելու, որ Դուք կատարել եք կամ փորձել եք կատարել հանցանք:

Դուք իրավունք ունեք իմանալու ենթադրյալ բնութագրությունը, ամսաթիվը և վայրը այն հանցանքի կատարման, որում կասկածվում եք:

Դուք իրավունք ունեք ցանկացած պահին հեռանալ այն տարածքից, որտեղ հարցաքննվում եք:

ԲԱՑԻ ԱՅԴ, ԴՈՒՔ ՏԵՂՅԱԿ ԵՔ, ՈՐ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ՝

Անել հայտարարություններ, պատասխանել հարցերին կամ լռել:

Ձեր ինքնությունը նշելուց հետո Դուք իրավունք ունեք Ձեր հարցաքննությունների ժամանակ՝
- անել հայտարարություններ,
- պատասխանել Ձեզ տրվող հարցերին,
- կամ լռել:

Ստանալ փաստաբանի աջակցություն

Եթե հանցանքը, որի համար Դուք հարցաքննվում եք, հանցագործություն է կամ ազատազրկմամբ պատժելի իրավախախտում, ապա Դուք կարող եք ստանալ փաստաբանի աջակցություն ձեր հարցաքննության կամ առերեսման ընթացքում:

Փաստաբանի ընտրություն

Դուք կարող եք խնդրել փաստաբանի աջակցություն Ձեր ընտրությամբ: Եթե Դուք ի վիճակի չեք փաստաբան նշանակել կամ, եթե ընտրված փաստաբանի հետ հնարավոր չէ կապ հաստատել, ապա Դուք կարող եք խնդրել, որ փաստաբանը նշանակվի իրավաբանների միության նախագահի կողմից:
Ծախսերը կատարվում են Ձեր կողմից, բացառությամբ եթե Դուք լրացնեք իրավաբանական օգնության թույլտվության պայմանները, որոնք նշված են Ձեզ տրված կից փաստաթղթում:

Փաստաբանի աջակցություն

Փաստաբանը կարող է՝
- հանդիպել Ձեզ հետ հանդիպման գաղտնիությունը երաշխավորող պայմաններում;
- և մասնակցել Ձեր հարցաքննություններին և առերեսումներին:
Դուք կարող եք ընդունել առանց Ձեր փաստաբանի ներկայության հարցաքննությունը շարունակելու որոշում:

Ստանալ թարգմանչի աջակցություն

Եթե դուք չեք խոսում կամ չեք հասկանում ֆրանսերեն, ապա Դուք իրավունք ունեք անվճար ստանալու փաստաբանի աջակցություն ձեր հարցաքննությունների, առերեսումների ընթացքում և Ձեր փաստաբանի հետ շփվելու համար:

Մուտք ունենալ Ձեր գործի որոշ փաստաթղթերին

Ձեր կամ Ձեր փաստաբանի խնդրանքով Դուք կարող եք վերանայել Ձեր հարցաքննությունների և առերեսումների մեկ կամ մի քանի արձանագրություններ:

Ստանալ իրավաբանական խորհրդատվություն

Դուք հնարավորություն ունեք ստանալու, անհրաժեշտության դեպքում՝ անվճար կերպով, իրավաբանական խորհրդատվություն օրենսդրական որևէ կառուցվածքում, որի տվյալները Ձեզ տրված են կից փաստաթղթում: